02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

47 (1396) • 7 դեկտեմբերի 2018 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Այց Արցախի Հանրապետություն

Նոյեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը Ստեփանակերտում հանդիպում ունեցավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ Արցախի ոստիկանության պետ Իգոր Գրիգորյանը:

Կողմերը կարեւորեցին երկու երկրների իրավապահ կառույցների միջեւ փոխգործակցության առավել ամրապնդումը՝ ընդգծելով դրա անհրաժեշտությունը հանցավորության դեմ պայքարի արդյունավետության, հետախուզվողների օպերատիվ հայտնաբերման տեսանկյունից: Առարկայական քննարկվեցին Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների ոստիկանությունների համագործակցությանը նոր թափ հաղորդելուն վերաբերող հարցեր: Կողմերը հավաստիացրին, որ այդ ուղղությամբ պատրաստակամ ու հետեւողական են լինելու:

Նոյեմբերի 30-ը Արցախի Հանրապետության ոստիկանության ծառայողի մասնագիտական օրն է:

Տոնի առթիվ ոստիկաններին շնորհավորելու էր եկել Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվիրակությունը՝ ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորությամբ, պետական այրեր, ոստիկանության վետերաններ: Արցախի Հանրապետության նախագահի կողմից՝ ծաղկեպսակ, հյուրերի կողմից ծաղիկներ խոնարհվեցին Արցախյան ազատամարտում զոհված ոստիկանների հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Հերոսացած ծառայակիցների հիշատակի ոգեկոչումից հետո սկսվեց մասնագիտական տոնին նվիրված հանդիսավոր նիստը: Ելույթ ունեցան Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Հայաստանի եւ Արցախի ոստիկանության պետերը:

էջ 2

Մարզային հանդիպումներ

Նոյեմբերի 30-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային այցով Գեղարքունիքի մարզում էր՝ հանդիպելու դեկտեմբերի 9-ին կայանալիք ԱԺ արտահերթ ընտրություններին ռեյտինգային ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուներին, նախընտրական շտաբների ղեկավարներին, ինչպես եւ Գեղարքունիքը սպասարկող ոստիկանության ծառայողներին:

Վալերիյ Օսիպյանը հավաստիացրեց, որ ոստիկանությունը տիրապետում է իրավիճակին եւ բավական փորձ ունի՝ թափանցիկ եւ արդար ընտրություններ կազմակերպելու առումով: Նա ներկայացրեց այդ ուղղությամբ իրականացված միջոցառումները՝ ընդգծելով, որ ոստիկանությունը հետեւողականորեն արձագանքելու է ցանկացած ահազանգի եւ ապօրինության:

Ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության անձնակազմի հետ հանդիպմանը Վալերիյ Օսիպյանը հրահանգեց ծառայել բարեխիղճ, աչք չփակել ոչ մի ապօրինության հանդեպ՝ հակառակ դեպքում հենց ոստիկանները պատասխանատվության կենթարկվեն:

էջ 3

Հասարակական խորհրդի նիստը

Դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նիստ, որը վարում էր խորհրդի նախագահ, ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Օրակարգում երկու հարց էր՝ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի գործունեությունը սոցիալական ցանցերի միջոցով հանրայնացնելը եւ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի ներգրավվածությունը:

Կարեւորվեց Հասարակական խորհրդի ֆեյսբուքյան էջի անհրաժեշտությունը, որով հանրությունը կարող է իրազեկվել կատարվող աշխատանքների մասին: Առաջարկվեց կազմակերպել սոցիալական ակցիաներ, որոնցում ընդգրկված քաղաքացիները մեկ ժամ կամ մեկ օր կարող են ականատես լինել, ասենք՝ ճՈ ծառայողի աշխատանքային առօրյային՝ համոզվելու, որ կոռուպցիան ոստիկանությունում արդեն հիշողություն է:

էջ 2

Հանուն անվտանգ երթեւեկության

Դեկտեմբերի 1-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը, ճանապարհային ոստիկանության ղեկավար կազմի մասնակցությամբ, հանդիպեց Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի քաղաքային տնտեսության ֆակուլտետի դեկան Վալերի Հարությունյանի հետ: Ներկա էին նաեւ ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի անդամներ: Քննարկվեց, թե ինչպես կարելի է կանոնակարգել երթեւեկությունը՝ խցանումներից, ճանապարհատրանսպորտային պատահարներից ու վթարներից խուսափելու համար:

Ոստիկանության պետը շնորհակալություն հայտնեց Վալերի Հարությունյանին, որ մտահոգ է քաղաքացիների անվտանգ երթեւեկությունն ապահովելու խնդրով, ապա լսեց փորձագետի կարծիքն ու առաջարկությունները:

Բանախոսը նշեց, որ մայրաքաղաքի փողոցներում շինություններ են կառուցվել՝ հաշվի չառնելով ո՛չ տրանսպորտային հիմնախնդիրները, ո՛չ էլ կոմունիկացիոն նորմերը, եւ եթե դրան էլ գումարում ենք օրեցօր ավելացող մեքենաների թիվը, ապա մոտ ապագայում Ճանապարհային ոստիկանությունը ի վիճակի չի լինի կարգավորել երթեւեկությունը: Եվ այս մասին պետք է բարձրաձայնել:

էջ 2

Երեւան տարի անց

Հայաստանում երկրաշարժեր շատ են եղել, իսկ սեյսմավտանգ տարածքներում միշտ են լինում: 20-րդ դարն էլ «հարուստ» էր երկրաշարժերով: Հինգ ավերիչ երկրաշարժ. 1926 թ. Լենինական (7-8 բալ), 1931 թ. Զանգեզուր (8-9 բալ), 1937 թ. Երեւան (7 բալ), 1968 թ. (7-8 բալ), եւ վերջապես ամենակործանարարը՝ 1988 թ. Սպիտակ (10 բալ):

Սպիտակի երկրաշարժը աշխարհում առաջին աղետն էր, որ ցնցեց նաեւ աշխարհի բոլոր մարդկանց սրտերը: Քաղաքականությունից, դավանանքից, ռասայական պատկանելությունից բազմաբեւեռ դարձած աշխարհը մի մարդու պես օգնության եկավ մեզ: Եկան բոլորը՝ կապիտալիստն ու սոցիալիստը, քրիստոնյան ու մուսուլմանը, սպիտակն ու սեւը, բոլորը: Սա ամենամեծ, ապրեցնող սփոփանքն էր: Այդ օրերին նաեւ ձեւավորվեցին միջազգային կառույցներ, որ այսօր էլ աղետի դեպքում միավորում են աշխարհն ու օգնության ձեռք մեկնում տուժած երկրին ու նրա ժողովրդին:

Աղետն ահարկու էր, ցավն՝ անտանելի, բայց ապրեցինք, անասելի վիշտը հաղթահարեցինք: Շարունակեցինք նաեւ մեր պայքարը, ու շարժվեցին նաեւ մեր պատմական հայրենիքի տակ արհեստականորեն դրված քաղաքական «սալերը»: Հաղթահարեցինք նաեւ այս փորձությունը, իսկ հետեւությունը մեկն է. երբեք չբացառել աղետ-պատերազմի հավանականությունը, հույսը նախեւառաջ դնել մեզ վրա ու կառուցել մեր՝ բոլոր իմաստներով սեյսմակայուն հայրենիքը:

Ինչ վերաբերում է Հայաստանի ոստիկանությանը՝ բազմիցս ապացուցված է, որ հայ ոստիկանը միշտ եղել է «ցնցումների» էպիկենտրոնում, մեղմել ու կանխել է երկրին, պետությանն ու ժողովրդին սպառնացող վտանգները, եւ սա գործելաոճ է: Ու սրան այլընտրանք չկա:

Այց Արցախի Հանրապետություն

Սկիզբը՝ էջ 1

Արցախի Հանրապետության նախագահի հրամանագրերով, մասնագիտական օրվա առթիվ, խրախուսանքների արժանացան ոստիկանության մի խումբ ծառայողներ:

Վալերիյ Օսիպյանի հրամանով Արցախի Հանրապետության ոստիկանության պետ Իգոր Գրիգորյանը պարգևատրվեց «Մարտական զորակցություն» մեդալով: ՀՀ ոստիկանության պետի հրամաններով տարբեր պարգևների արժանացան Արցախի ոստիկանության եւս երկու տասնյակ ծառայողներ:

Հրապարակվեցին Արցախի Հանրապետության մի շարք գերատեսչությունների եւ կազմակերպությունների ղեկավարների հրամանները՝ մասնագիտական տոնի առթիվ արցախցի ոստիկանների պարգեւատրելու մասին:

Արցախի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանին շնորհվեց Արցախի Հանրապետության ոստիկանության պատվավոր ծառայողի կոչում: ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Աղասի Կիրակոսյանը, հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը, շտաբի միջազգային համագործակցության վարչության արարողակարգի բաժնի պետ Վահան Աշխարոյանը պարգեւատրվեցին «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

Հանդիսավոր նիստի ընթացքում տարբեր պարգեւների արժանացան Արցախի ոստիկանության հարյուրից ավելի ծառայողներ, համակարգի նախկին ղեկավարներ, վետերաններ, դրամական աջակցություն ստացավ մարտական գործողությունների ժամանակ ու ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված ոստիկանների շուրջ հիսուն ընտանիք:

Ն. Ա.

Հանուն անվտանգ երթեւեկության

Սկիզբը՝ էջ 1

Վալերիյ Օսիպյանը ներկայացրեց երթեւեկությունը կարգավորելու ուղղությամբ կատարված աշխատանքնե՝ խաչմերուկներն ազատող գծանշումներից մինչեւ «խելացի» լուսացույցերի տեղադրումը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ ուրբանիզացիոն խնդիրների մասին. բուհերը, նախարարություններն ու շատ գերատեսչություններ, գտնվելով Երեւանում, ինքնաբերաբար տրանսպորտային հոսքերի մեծ մասը բերում են կենտրոն, եւ անհրաժեշտ է նոր էսպակադաներ, վերգետնյա ու ստորգետնյա տրանսպորտային հանգույցներ կառուցել:

Քանի որ բարձրացրած խնդիրները վերաբերում էին նաեւ տարբեր գերատեսչությունների, որոշվեց առաջիկայում կազմակերպել ավելի լայն քննարկում՝ ներգրավելով նաեւ այլ շահագրգիռ կողմերի ու կառույցների:

Գ. Վ.

Հասարակական խորհրդի նիստը

Սկիզբը՝ էջ 1

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ ոստիկանության պետը ներկայացրեց ոստիկանության գործողությունները նախընտրական այս օրերին, ինչպես եւ ծառայողական պարտականությունները դեկտեմբերի 9-ին՝ համապետական ընտրության օրը: Նա շեշտեց, որ մարզերում տեղի ունեցող հանդիպումները ոչ թե քաղաքական նպատակ են հետապնդում, այլ ընտրությունից առաջ հանրությանը, մասնավորապես՝ ընտրական գործընթացներում ներգրավված անձանց օրենքի պահանջները հիշեցնելն ու նրանց աջակցությունն ակնկալելն է: «Ոստիկանության ծառայողների հետ հանդիպումներն ունեն մի նպատակ՝ ստուգել, թե որքանով է անձնակազմը պատրաստ առաջիկա ընտրություններին, տալ

համապատասխան ցուցումներ»,- նշեց նա:

Ոստիկանության պետին կից հասարակական խորհրդի նախագահի տեղակալ Արտաշես Ավոյանն իր խոսքում նշեց. «Վստահ եմ՝ ինչպես Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ, այնպես էլ հիմա ձեզանից շատերը կունենան հածնաժողովի անդամի ու վստահված անձի կարգավիճակ: Ոստիկանությունն, իհարկե, ունենալու է իր վերակարգերը, բայց մենք չափազանց կարեւորում ենք Հասարակական խորհրդի ներգրավվածությունն ու դերակատարումը ընտրական գործընթացում: Ցանկացած ընտրախախտման դեպքում խնդրում ենք ահազանգել ոստիկանություն եւ պարբերական կապ պահպանել Հասարակական խորհրդի հերթապահ խմբի հետ»,- ասաց նա:

Վալերիյ Օսիպյանը շեշտեց, որ պետք է բազմապատկել ուշադրությունն ու զգոնությունը. «Եթե առկա է ձեր աջակցությունն ու պատրաստակամությունը, ապա մեզ համար չի կարող լինել որեւէ անիրագործելի նպատակ»:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Հայտնաբերվեց հինգ տարի անց

Ներկայացվող դեպքը տեղի է ունեցել 2013 թ. հոկտեմբերին՝ Սեւան-Երեւան ճանապարհին: Ուրիշի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու եւ խուլիգանության մեղադրանքով հետախուզվողը հայտնաբերվեց հինգ տարի անց:

Իսկ հիմա՝ ըստ էության:

2013 թ. հոկտեմբերի 13-ին, ժամը 20.00-ի սահմաններում, Սեւանից Երեւան ընթացող «Լեքսուս» մակնիշի մեքենայի վարորդը ցանկացավ վազանցել նույն ուղղությամբ ընթացող «Նիվա» մակնիշի մեքենային: «Նիվա»-ի վարորդը՝ 28-ամյա Արտակ Ոսկանյանը, ճանապարհը չզիջեց: Ավելին՝ ուշադրության էլ չարժանացրեց ձայնային եւ լուսային ազդանշան տվող մեքենային. զայրացած խոսում էր հեռախոսով: Նախորդ օրը բուռն վեճ էր ունեցել աշխատավայրում, հետո զայրույթը տեղափոխել էր տուն եւ ինչ-որ անհեթեթ պատճառով ծեծել էր կնոջը, նա էլ թողել-գնացել էր Սեւան՝ հորական տուն: Արտակը կնոջ հետ ապարդյուն «բանակացությունից» էր վերադառնում՝ ճանապարհին հեռախոսով շարունակելով վեճը:

Հետեւից ընթացող «Լեքսուս»-ի վարորդը ձայնային ազդանշան տալով՝ առաջ անցավ՝ չմոռանալով պատուհանից անհարգալից խոսքեր նետել «Նիվա»-ի վարորդի հասցեին: Հեռախոսային խոսակցությունն ի վնաս իրեն ավարտած Արտակին ինչ-որ մեկի վրա զայրույթը թափելու առիթ էր պետք, ու եղավ առիթը: Հավասարվեց «Լեքսուս»-ին ու վարորդից պահանջեց կանգնեցնել մեքենան:

«Ես»-ի, «ճշտի» հարց էր, ու ոչ պակաս անխոհեմ մյուս երիտասարդը՝ քսանչորսամյա Մխիթար Հովսեփյանը, մեքենան կանգնեցրեց: Երկուսով թափով իջան մեքենաներից ու... Նախահարձակը Արտակն էր: Բռունցքով խփեց Մխիթար Հովսեփյանի դեմքին ու «ասելիքն» ավարտած համարելով՝ գնաց դեպի «Նիվա»-ն: Բայց ինչ պակաս տղա էր Մխիթար Հովսեփյանը, որ ըստ արժանվույն չհակադարձեր: Հետեւից հասավ Արտակին ու... Գրպանի դանակն արդեն ձեռքին էր. հարվածեց թիկունքին ու վերջին խոսքն ասողի հպարտությամբ հեռացավ...

Դանակահարված Արտակ Ոսկանյանին հիվանդանոց տեղափոխեց նրա իսկ կանչով ժամանած «շտապօգնության» բրիգադը: Թոքն էր վնասվել: Բժիշկներին հաջողվեց փրկել կյանքը:

Ոստիկանություն «շտապօգնության» բժիշկն ահազանգեց: Հիվանդանոց մեկնած օպերատիվ խմբին դժվար աշխատանք էր սպասում. տուժողը վիրահատարանում էր, իսկ դեպքի վայրում որեւէ հանցանշան չկար: Միակ տվյալը, որ հետո հայտնեց տուժողը, այն էր, որ իրեն դանակահարած երիտասարդի մեքենան սեւ գույնի էր:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները փակուղի մտան: Քրեական գործը կասեցվեց, իսկ բացահայտման աշխատանքները շարունակվում էին:

Դեպքից ամիսներ անց քրեական հետախույզներին հաջողվեց պարզել, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինի մայրաքաղաքի բնակիչ Մխիթար Հովսեփյանը: Նրան հայտնաբերել չհաջողվեց. մեկնել էր Ռուսաստանի Դաշնություն: Նրա նկատմամբ հայտարարվեց միջպետական հետախուզում:

Ռուս գործընկերների հետ համագործակցության արդյունքում Մխիթար Հովսեփյանը հայտնաբերվեց հինգ տարի անց եւ տեղափոխվեց Հայաստան:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Փախուստի դիմածը հայտնաբերվեց

Նոյեմբերի 30-ին քրեական հետախույզների ձեռնարկած բացատրական աշխատանքի արդյունքում ոստիկանություն ներկայացավ Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհին կասկածելի վնասվածքներով «Մերսեդես»-ից փախուստի դիմած Արտյոմ Անտոնյանը:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 28-ին, ժամը 15-ի սահմաններում, ոստիկանության Մարտունու բաժնի ծառայողները Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 56-րդ կիլոմետրին՝ Երանոս գյուղի հատվածում, նկատել էին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա, որի դիմապակին եւ կողային ապակիները կոտրված էին, իսկ հետեւի լուսարձակի մեջ մխրճված էր մետաղե մահակ:

Չորագյուղ-Ծակքար համայնքների հատվածում ոստիկանները կանգնեցրել էին կասկածելի վնասվածքներով մեքենան: Վարորդը իջել էր «Մերսեդես»-ից ու փախել՝ նետելով ատրճանակը: Ուղեւորին ոստիկանները բռնել ու բերման էին ենթարկել:

Պարզվել էր, որ առգրավված ատրճանակը «Վալտեր» է՝ փամփշտակալում երեք չկրակված փամփուշտով: Իրականացվել էին օպերատիվ-հետախուզական եւ քննչական գործողություններ:

Պարզվել էր փախուստի դիմած անձի ինքնությունը: Նրան հայտնաբերելու միջոցառումներին զուգահեռ իրականացված բացատրական աշխատանքն արդյունք տվեց. 33-ամյա Արտյոմ Անտոնյանը ներկայացավ ոստիկանության Մարտունու բաժին:

Տեղեկացնենք, որ նոյեմբերի 28-ին հրազենային վնասվածքներով Գեղարքունիքի մարզից Երեւանի տարբեր բժշկական կենտրոններ էին տեղափոխվել Նորատուսում ապրող երկու եղբայր:

Կատարվում է նախաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Մարզային հանդիպումներ

Սկիզբը՝ էջ 1

Դեկտեմբերի 3-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային այցով Լոռիում էր: Նա Վանաձորում հանդիպում ունեցավ արտահերթ խորհրդարանական ընտրություններին ռեյտինգային ընտրակարգով առաջադրված թեկնածուների ու նախընտրական շտաբների ղեկավարների հետ: Նախընտրական շրջանում ոստիկանության իրականացրած կանխարգելիչ միջոցառումները ներկայացնելուց հետո Վալերիյ Օսիպյանը նշեց, որ ազատ եւ թափանցիկ ընտրություններ ունենալով մտահոգված են նաեւ թեկնածուներն ու նախընտրական շտաբների ղեկավարները: Այդ առումով կարեւորվեց նրանց եւ ոստիկանության ծառայողների ակտիվ համագործակցությունը, ինչի արդյունքում կբացառվեն ընտրախախտումները:

Վալերիյ Օսիպյանը հանդիպեց նաեւ ոստիկանության Լոռու մարզային վարչության անձնակազմին: Նա ամփոփեց անցած ամիսների ընթացքում Լոռու ոստիկանների կատարած աշխատանքը, վեր հանեց առկա թերությունները, հանձնարարականներ տվեց դրանց օպերատիվ վերացման ուղղությամբ: Անդրադարձավ նաեւ առաջիկա ընտրությունների ժամանակ ոստիկանության Լոռու մարզային վարչության գործելակերպին՝ շեշտելով, որ գործեն անկաշկանդ եւ, ամենակարեւորը, օրենքի շրջանակներում: Վալերիյ Օսիպյանը հրահանգեց ուշադրության կենտրոնում պահել մարզի, այսպես ասած՝ քրեական հեղինակություններին՝ բացառելով նրանց ներգործությունը քաղաքացու ընտրական իրավունքի ազատ իրացման վրա:

* * *

Հաջորդ աշխատանքային այցը Տավուշի մարզում էր: Վալերիյ Օսիպյանը ԱԺ առաջիկա ընտրություններին ռեյտինգային ընտրակարգով Տավուշում առաջադրված թեկնածուներին եւ նախընտրական շտաբների ղեկավարներին ներկայացրեց հանդիպման նպատակներն ու քննարկվելիք հարցերի կարեւորությունը: Նա նշեց, որ ոստիկանության ջանքերը ազատ եւ թափանցիկ ընտրություններ ունենալու առումով ավելի արդյունավետ կլինեն, եթե նախընտրական շրջանում եւ ընտրությունների օրը թեկնածուներն ու տեղի ոստիկանները ակտիվ համագործակցեն՝ միասնաբար հակազդելով ցանկացած ապօրինության: Ոստիկանության պետը ներկաներին հորդորեց ապօրինություն հայտնաբերելու դեպքում անմիջապես տեղեկացնել ոստիկանությանը:

Վալերիյ Օսիպյանը հանդիպեց նաեւ մարզը սպասարկող ոստիկաններին: Նա հայտնեց, որ բոլորը մեկ մարդու պես պետք է պատրաստակամ ու սրտացավ ծառայեն՝ բացառելով ընտրական գործընթացների վրա հակաօրինական ներգործությունները, իսկ դրանց առկայության դեպքում պետք է օպերատիվ բացահայտեն ու համապատասխան ընթացք տան:

* * *

Դեկտեմբերի 3-ին աշխատանքային այցով Վալերիյ Օսիպյանը Կոտայքի մարզում էր: Նա արտահերթ խորհրդարանական ընտրություններին ռեյտինգային ընտրակարգով առաջադրված թեկնածուներին եւ նախընտրական շտաբների ղեկավարներին հանդիպման ժամանակ նա հավաստիացրեց, որ ոստիկանությունն ամբողջությամբ վերահսկում է օպերատիվ իրավիճակը, ինչպես եւ ուշադրության կենտրոնում է պահում քրեական տարրերին: Նաեւ հորդորեց աջակցել ոստիկանությանը՝ հավաստիացնելով, որ ցանկացած ահազանգ կարժանանա արագ արձագանքի ու համապատասխան ընթացք կստանա:

Վալերիյ Օսիպյանը հանդիպեց նաեւ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության անձնակազմի հետ եւ կոնկրետ հրահանգներ տվեց ծառայության արդյունավետ կատարման համար: Քննարկվեցին նաեւ ընտրությունների ժամանակ օրենքով ոստիկանությանը վերապահված իրավունքներն ու լիազորությունները:

* * *

Դեկտեմբերի 5-ին ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը հանդիպեց ԱԺ արտահերթ ընտրություններին Երեւանում ռեյտինգային ընտրակարգով առաջադրված պատգամավորության թեկնածուներին ու նախընտրական շտաբների ղեկավարներին: Նա կոչ արեց համագործակցել ոստիկանության հետ, ցանկացած իրավախախտման ականատես լինելիս դիմել ոստիկանություն:

Խոսվեց ոստիկանության պատրաստած թռուցիկների մասին, որոնք հիշեցնում են ընտրությունների հետ կապված՝ օրենքով արգելված գործողությունները:

Նույն օրը ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանն աշխատանքային խորհրդակցություն անցկացրեցին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ու ենթակա բաժինների անձնակազմի հետ: Ներկայացվեց ոստիկանության առջեւ դրված պահանջները՝ կանխել ու բացահայտել ընտրակաշառք խոստանալու, առաջարկելու, տալու եւ վերցնելու դեպքերը, բացառել ընտրատեղամասերին հարող տարածքում մինչեւ 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը եւ այլն:

Քննարկվեցին նաեւ մայրաքաղաքում օպերատիվ իրավիճակի հետ կապված հարցեր:

Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ
Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Յուրացումներ բացահայտվեցին

Իրացնելով Ազգային անվտանգության ծառայությունից ստացված օպերատիվ տեղեկությունները՝ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության կոռուպցիայի եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հակազդման վարչության աշխատակիցները օրերս բացահայտել են նախկինում կատարված յուրացման երեք դեպք:

Առաջին դեպքում վարչության աշխատակիցները համագործակցել են նաեւ ոստիկանության Ծիրակի մարզային վարչության եւ Արթիկի բաժնի ծառայողների հետ: Պարզվել է, որ Արթիկի թիվ 4 հիմնական դպրոցի նախկին տնօրեն Արուսյակ Ստեփանյանը պաշտոնավարման ընթացքում աշխատանքի է ընդունել իր մտերիմներին, նրանց անվամբ հաշվեգրել է աշխատավարձ, սակայն նրանք աշխատանքի չեն ներկայացել, իսկ աշխատավարձի գումարը յուրացրել է Ստեփանյանը: 2011 թվականից մինչեւ այս տարվա փետրվարը ներառյալ, չորս հոգու անվամբ, տարբեր ժամանակահատվածներում ընդհանուր առմամբ դուրս է գրվել եւ յուրացվել երկու միլիոն 483 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Հաջորդ դեպքը բացահայտվել է Ծիրակի մարզային վարչության եւ Ախուրյանի բաժնի ծառայողների հետ համատեղ: ԱԱԾ-ից ստացված տվյալներն իրացնելիս պարզվել է, որ Արեւիկ համայնքի նախկին ղեկավար Դավիթ Թուխիկյանը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, 2006-2010 թթ. որպես ակումբավար է ձեւակերպել մի կնոջ, որն աշխատանքի չի ներկայացել, իսկ նրա անվամբ դուրս գրված աշխատավարձը՝ մեկուկես միլիոն դրամ, յուրացվել է:

Յուրացման մյուս դեպքը բացահայտվել է ոստիկանության Կոտայքի մարզային վարչության եւ Հրազդանի բաժնի ծառայողների հետ համագործակցությամբ: Պարզվել է, որ «Հրազդան բժշկական կենտրոն» ՓԲԸ հինգ աշխատակցի անվամբ 2017 թ. դեկտեմբերին դուրս է գրվել 60-հազարական դրամ պարգեւավճար. գումարը յուրացվել է: Յուրացվել է նաեւ այս տարվա հունիսին մի հիվանդի անվամբ դուրս գրված 16 հազար դրամ արժողության դեղամիջոցը: Իսկ այս տարվա հունվար-փետրվար ամիսներին բժշկական կենտրոնի աշխատակիցները, պետության կողմից երաշխավորված անվճար եւ արտոնյալ պայմաններով բժշկական սպասարկման շրջանակում, ինը հիվանդի վերաբերյալ կեղծ տեղեկություններ են ներկայացրել առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալություն, ինչի հետեւանքով հափշտակվել է 643 հազար դրամ:

Բոլոր փաստերով հարուցվել են քրեական գործեր:

Իսկ ոստիկանությունը շարունակում է պայքարը կոռուպցիայի դեմ՝ ակտիվորեն համագործակցելով իրավապահ այլ կառույցների հետ:

Արա ՄՈՎՍԻՍՅԱՆ

«Ընտանեկան» անծուդաղ

Գյումրեցի Մանվել Հովսեփյանը ամիսներ առաջ էր ընտանիք կազմել: Ընտանեկան համերաշխությունը, սակայն, կարճ տեւեց: Հերթական վեճից հետո կինը՝ Վարդուհին, վերադարձավ հայրական տուն: Մանվելը փորձում էր հանդիպել, խոսել հետը, սակայն Վարդուհին չէր ցանկանում: Որոշել էր՝ ամուսնալուծվելու է:

Վարդուհու հետ հանդիպել կամ հեռախոսով խոսել չկարողանալով՝ Մանվելը որոշեց դիմել աներոջ օգնությանը: Զանգեց նրան, սակայն նա անջատեց հեռախոսը:

Մանվելը որոշեց Վարդուհուն անձամբ հանդիպել: Հասնելով աներոջ տան մոտ՝ կանգնեց պատուհանի տակ եւ ձայն տվեց Վարդուհուն ու նրա հորը: Վերջինս տանը չէր, սակայն մեքենան բակում էր: Մանվելը ենթադրելով, որ աները թույլ չի տալիս աղջկան դուրս գալ տնից, զայրացավ: Բարկությունը մեղմեց գարեջուր խմելով, ապա վերադարձավ աներոջ տան մոտ: Ձայն տվեց, զանգեց, բայց Վարդուհին չարձագանքեց: Մանվելն այս անգամ զայրույթն արտահայտեց այլ կերպ. քարերով հարվածեց եւ կոտրեց աներոջ տան պատուհանների ապակիներն ու՝ պաշտպանիչ ցանցերը:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցները: Մանվել Հովսեփյանը խախտել էր քրեական օրենսգրքի 185 հոդվածի պահանջները, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գյումրիում ապրող նորաստեղծ մեկ այլ ընտանիքում եւս կռիվ էր ընկել:

Արամ Հայրապետյանը կնոջ՝ Լարիսայի հետ որոշեց մասնակցել Գյումրու օրվա տոնակատարությանը: Արամի մայրը՝ Սիլվան, իմանալով նրանց մտադրության մասին՝ դժգոհությունը չթաքցրեց: Տան գործերը թողած՝ ուր էին գնում: Լարիսան սկեսուրի վերաբերմունքից նեղսրտելով՝ կոպտեց, ինչին ի պատասխան՝ արժանացավ Արամի ապտակին: Լարիսան հավասարակշռությունը կորցնելով՝ ընկավ եւ վրդովված ամուսնու արարքից՝ թուլամորթ անվանեց նրան: Արամը զայրանալով՝ բռնեց կնոջ պարանոցից՝ սպառնալով, որ կխեղդի:

Սիլվայի միջամտությամբ որդին խաղաղվեց: Իսկ Լարիսան զանգեց հորը եւ տեղեկացնելով կատարվածի մասին՝ խնդրեց գալ իր հետեւից: Հայրը եկավ եւ, առանց կատարվածի պատճառները պարզելու, աղջկան տարավ:

Ոստիկանության Կումայրիի բաժնում նյութեր նախապատրաստվեցին: Արամ Հայրապետյանը խախտել էր քրեական օրենսգրքի 118 հոդվածի պահանջները: Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Այց ընկերուհուն եւ՝ ոչ միայն

Վանաձոր քաղաքի բնակիչ Արման Նահապետյանը քրեական օրենսգրքի հետ նախկինում մի քանի անգամ առնչվել էր: Օրենքի հետ հերթական հանդիպումը չուշացավ:

Արմանն ամուսնալուծված է: Ոչ միայն ընտանեկան երջանկություն, այլեւ աշխատանք չունի: Ամբողջ օրը ծանոթների հետ է ժամանակ անցկացնում, նաեւ այցելում է ընկերուհուն: Այդ այցելությունների ընթացքում էլ բնակարաններից մեկը գրավեց ուշադրությունը: Տանտիրուհին ամուսնացել ու փեղափոխվել էր Երեւան: Արմանը որոշեց «հյուրընկալվել» այդ փանը:

Դռան փականը կոտրելով՝ ներս մտավ ու գողացավ ձայնարկիչ՝ բարձրախոսներով հանդերձ, բազմոցի ու բազկաթոռի ծածկոցներ: Քանի որ փանելիք կար, նույն օրը երկրորդ անգամ ելումուտ արեց. այս անգամ գողացավ ալյումինե փարաներ:

Ու մինչ շարունակում էր ապրել իր, այսպես ասած՝ բնականոն կյանքով, գողություն կատարելու կասկածանքով հայտնվեց քրեական հետախույզների տեսադաշտում, իսկ հետո բերման ենթարկվեց ոստիկանության Տարոնի բաժին:

Կատարվում է քննություն:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Ցույն եւ հակաթույն

Ֆանտաստիկական եւ լրտեսական ֆիլմերը, որոնցում խոսվում է ճշմարտության դեղերի, երիտասարդացման թուրմերի եւ մարդուն ժայռի պես ամուր ու անխոցելի դարձնող հաբերի մասին, պարզվում է, այնքան էլ երեւակայության ոլորտից չեն: Դայտնի է, որ հատուկ ծառայությունների գաղտնի փորձարաններում միշտ էլ կատարվում են գիտափորձեր՝ այնպիսի միջոցների ստեղծման ուղղությամբ, որոնք կարող են կատարելագործել կամ ոչնչացնել մարդուն:

Մոսկվայի Վարսոնոֆեւյան նրբանցքի առանձնատներից մեկում ժամանակին գործել է ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմատի այս կարգի գաղտնի լաբորատորիա, որի մասին սարսափելի լուրեր էին պտտվում: Խոսում էին, որ մինչեւ անցյալ դարի կեսերը այստեղ բանտարկյալների վրա փորձարկվում էր թույների ազդեցությունը: Փորձագետները պնդում են, որ այդ լուրերն անհիմն չէին. այս փորձարանում իրոք հավաքվել են թունատեսակներ աշխարհի բոլոր անկյուններից եւ փորձարկվել են դրանց հնարավորությունները:

Մասնագետները հավաստում են, որ այստեղ ուսումնասիրվել են նաեւ հնագույն դեղատոմսեր, օրինակ՝Իվան Անեղի բժշկի դեղատոմսերը: Բժիշկը, որին կոչում էին «դոխտուր Ելիսեյ», կրթություն էր ստացել Եվրոպայում եւ բարձրակարգ մասնագետի որակավորում ուներ: Թագավորի հրամանով նա հատուկ թույներ էր պատրաստում, որոնք մարդուն կարող էին սպանել նշանակված օրն ու ժամին: Ի վերջո, Իվան Անեղն ինքն է թունավորում Ելիսեյին, քանի որ նրա կողմից հավանական վտանգ էր տեսնում:

Իր թունավորողն է ունեցել նաեւ Ստալինը: Բժշկի անունը Հենրիխ Մայրանովսկի էր: Հենց նա էր ղեկավարում Վարսոնոֆեւյան նրբանցքի գաղտնի լաբորատորիան: Նրա սիրած թույնը կուրարինն էր, որը սրտային անբավարարություն էր առաջացնում: Երբ Ստալինը մեռավ, Մայրանովսկուն մեղադրեցին ապօրինաբար ուժեղ ներգործություն ունեցող դեղամիջոցներ պահելու համար ու բանտ նստեցրին, սակայն բժիշկն իրեն մեղավոր չճանաչեց: Որոշ ժամանակ անց նա մահացավ... սրտային անբավարարությունից:

Սովետական ժամանակներում միայն մահացու դեղերով չէ, որ հետաքրքրվում էին: Օրինակ, հայտնի գիտնական Ալեքսեյ Դորոգովը ստեղծել էր մի պրեպարատ, որը կարող էր բուժել տուբերկուլյոզը, խոցերը եւ ուռուցքային հիվանդությունները: Նրա հիվանդների 72 տոկոսն առողջանում էր: Իր հրաշագործ դեղը Դորոգովը պատրաստում էր թորման պարզ եղանակով, իսկ վերջում խառնուրդին ձվի սպիտակուց էր ավելացնում: Ասում են, որ հենց այդ դեղամիջոցով է բուժել Բերիայի մոր քաղցկեղը:

Մեծ գիտնականի կյանքը նույնպես ողբերգական ավարտ ունեցավ. մի անգամ նստեց իր «Վոլգան», այցելության գնաց հերթական հիվանդին եւ այլեւս չվերադարձավ...

Սովետական եւ ամերիկյան գիտնականներն են գաղտնի լաբորատորիաներում մշակել նաեւ ԼՍԴ հոգեմետ դեղամիջոցը: Մասնավորապես ամերիկացիները նպատակ ունեին դրա միջոցով կառավարելի դարձնել մարդու գիտակցությունը, սակայն պարզեցին, որ այդ պրեպարատի ազդեցության տակ մարդը կատարելապես անկառավարելի է դառնում, եւ դադարեցրին գիտափորձերը:

Այս ուղղությամբ սովետական գիտնականների աշխատանքը մինչ օրս էլ գաղտնագրված է:

Մարդու վրա ուժեղ ազդեցություն ունեցող դեղամիջոցների ստեղծման ուղղությամբ աշխատանքներն այսօր էլ շարունակվում են աշխարհի տարբեր երկրներում: Օրինակ, ստեղծվել է մի դեղամիջոց, որը զինվորին հնարավորություն է տալիս ողջ մնալ նույնիսկ հակառակորդի կողմից միջուկային զենք օգտագործելուց հետո: Ճիշտ է, պրեպարատի ազդեցության տակ մարդն ընդամենը մի քանի օր է ապրում եւ հետո, այնուամենայնիվ, մահանում է, բայց այդ ժամանակահատվածը բավական է, որ նա կատարի մարտական առաջադրանքը:

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

Ավարձալի ամփոփագիր

87-ամյա սկեսուրը

Ոստիկանություն զանգած 56-ամյա Անդան հայտնում էր, որ տնից փող եւ փաստաթուղթ են գողացել:

Ոստիկաններին նա հատնեց, որ վերջին երկու օրվա ընթացքում 87-ամյա սկեսուրն իր տնից գողացել է մեկուկես միլիոն դրամ, երկու հազար ռուբլի, անձնագիրը, ժամանակավոր բնակության մասին դատարանի վճիռը, հողի հարկի վճարման անդորրագրերը, աշխատանքային գրքույկը, ծննդյան վկայականը, սկեսրայրի մահվան վկայականի պատճենը, փախստականի գրքույկը, կադաստրի տեղեկանքը եւ այլ փաստաթղթեր: Անդան նշել է նաեւ, որ սկեսուրը տուն է մտել իրենից գողացած բանալիով:

Գողոնը դեռ ոչինչ, ձեռնարկվում են միջոցառումներ 87-ամյա կնոջը հայտնաբերելու ուղղությամբ:

Սաունայում

27-ամյա Աննան հաղորդում է տվել, որ գիշերը հյուրանոցի սաունայում ոմն Իգոր, սեռական հարաբերության առաջարկը մերժելու պատճառով, խփել է իր գլխին ու ձեռքին՝ պատճառելով վնասվածքներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Աննան բացատրություն է տվել, որ վիճաբանության ժամանակ ինքը դուրս է եկել հյուրանոցի բակ, Իգորը՝ նույնպես, եւ հետապնդումը կանխելու նպատակով իր անվամբ հաշվառված գազային ատրճանակից ինքը մեկ անգամ օդ է կրակել ու հեռացել:

Ատրճանակը վերցվել է:

Առանց Կարենի

Ուշ երեկոյան ոստիկանություն զանգած կինը հայտնում էր, թե վիճաբանություն է, դանակով ուզում են իրենց խփել:

Պարզվել է, որ զանգողը 30-ամյա Մերին է: Իսկ կատարվել է հետեւյալը. Մերիի ամուսնու՝ Կարենի սիրուհի Աննան, վիճաբանության ժամանակ քաշել է Կարենի մոր՝ 50-ամյա Անժիկի մազերից, ձեռքով խփել կրծքին, իսկ սիրուհի Աննայի որդի Աշոտը դանակով սպառնացել է Մերիի եղբայր, 39-ամյա Կարենին՝ սպառնալով, թե կմորթի:

Առայժմ բոլորը ողջ են: Մնում է պարզել, թե այս բոլորն ի՞նչ գործ ունենին նույն ժամին, նույն տեղում:

Բարի տաքսիստը

Ոստիկանություն զանգած 24-ամյա տաքսիստը հայտնում էր, որ ուղեւորն իրեն թալանել է:

Մեկնած ոստիկաններին նա հաղորդում է տվել, որ իր «Նիսան Տիդա» մեքենան է նստել անծանոթ մի անձ, ում տեղափոխել է «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ: Կենտրոն մտնելուց եւ հինգ րոպե անց վերադառնալուց հետո անձը իրենից փող է պահանջել, իսկ երբ ինքը պատասխանել է, որ փող չունի, նա գրպանից հանել է ինչ-որ իր եւ կրկին պահանջել փող: 2500 դրամը ստանալուց հետո նա հեռացել է:

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 29-ից դեկտմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 39 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 3-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու և դտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու, 3-ը՝ ծեծի, 1-ը՝ կողոպուտի և գողության, 4-ը՝ գողության, 4-ը՝ խարդախության, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու կամ իրացնելու, 1-ը՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու և ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու, 1-ը՝ խուլիգանության, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանց ապօրինի իրացնելու, 1-ը՝ կաշառք տալուն հանցակցելու,1-ը՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալու կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու, 1-ը՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 1-ը՝ դասալքության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 3 հետախուզվող:

Արձանագրվել է 84 ճանապարհատրանսպորտային պատահար. 6 մարդ զոհվել է, 112-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 29 դեպք. 2 մարդ զոհվել է, 29-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Հանրապետության ճանապարհներին

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Թամանցիների փողոցում իրար են բախվել «Օպել», «Ֆորդ» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Շարուրի փողոցում իրար են բախվել «Օպել» եւ «ԲՄՎ» մակնիշի ավտոմեքենաներ. «ԲՄՎ»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Օրբելու փողոցում վրաերթի է ենթարկել մի քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Ծիծեռնակաբերդի խճուղում իրար են բախվել «ՎԱԶ-21703» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Մոնթե Մելքոնյան փողոցում իրար են բախվել «ՎԱԶ-2121», «Օպել» եւ երկու «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ներից մեկի վարորդը, «Օպել»-ի վարորդը եւ 13-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւանի Ռուբինյանց փողոցում իրար են բախվել «ԳԱԶ-32213», «Ինֆինիտի» եւ «Ֆոլքսվագեն» մակնիշի ավտոմեքենաներ, այնուհետեւ «Ֆոլքսվագեն»-ը առաջ շարժվելով՝ վրաերթի է ենթարկել 49-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «Մերսեդես 8 240» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Արարատի մարզի Գինեվետ գյուղում վրաերթի է ենթարկել 7-ամյա տղայի, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում իրար են բախվել «ՎԱԶ-2115» եւ «Օպել Աստրա ՋԻ» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-2115»-ի 50-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «Նիսան Նոտե» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Իջեւան ճանապարհի 70-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել հողաթմբի եւ կողաշրջվել. երկու ուղեւորուհիները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին «ՎԱԶ-21121» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Կապան քաղաքի Հ. Ավետիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 77-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 3-ին Երեւան-Մեղրի ճանապարհի 121-րդ կմ-ին իրար են բախվել «Նիսան» եւ «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Աստրա»-ի ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 4-ին Երեւանի Գ. Չաուշի փողոցում իրար են բախվել երկու «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ. ուղեւորներից մեկը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Դեկտեմբերի 4-ին «Նիսան Պատռոլ» մակնիշի ավտոմեքենան Կոտայքի մարզի Քանաքեռավան գյուղում վրաերթի է ենթարկել 84-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Համաշխարհային փողերը եւ իրական դեկավարները

Սկիզբը՝ նախորդ համարում

Ամերիկայի եւ Եվրոպայի հարուստ ընտանիքները չեն սահմանափակվում ամբողջ աշխարհում ամենաշահութաբեր ակտիվները տիրապետելով: Հենց նրանք են ստեղծել ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը: 1910 թ. ԴՊՀ-ում ներդրումներ են կատարել մի խումբ բանկիրներ՝ Մորգան, Ռոքֆելլեր, Լոեբ, Դյուպոն, Գոլդման, Սաքս, Կուն, Մելոն եւ այլն: ԴՊՀ-ն կատարում է երկրի Կենտրոնական բանկի գործառույթները, բայց համարվում է բաժնետիրական: Յուրաքանչյուր բաժնետեր տարեկան ստանում է իր ներդրածի 6% շահույթը: ԴՊՀ-ի կառուցվածքում գործում է երկրի բոլոր կրեդիտային միությունների եւ բանկերի 38 %-ը: Նրանցից յուրաքանչյուրը ԴՊՀ-ում 3 %-ի բաժնեմաս ունի: Ամերիկայի հարուստ ընտանիքներն արդեն մի քանի հարյուրամյակ բարգավաճում են եւ ԴՊՀ-ի միջոցներով ազդում ոչ միայն ԱՄՆ-ի վրա, այլեւ ուրիշ երկրների, քանի որ մինչ օրս դոլարը մնում է պահուստային արտարժույթ:

ԴՊՀ-ից ցանկացած փոխառություն տեղի է ունենում միայն կողմերի շահերի համընկնման դեպքում, հետեւաբար անհրաժեշտ է ազդեցիկ բանկիրների համաձայնությունը: ԱՄՆ-ի պարտքը ԴՊՀ-ին միլիարդավոր դոլարներ են, անգամ խոսում են տրիլիոն դոլարների մասին: Ընթացող ֆինանսատնտեսական ճգնաժամերի ամենամեծ խնդիրն այն է, որ ԴՊՀ-ն կարող է փողերի տպագրամեքենան դնել արագացված ռեժիմի վրա, որն էլ ԱՄՆ-ին կարող է բերել դեֆոլտի կամ դոլարի հիպերինֆլյացիայի: Բայց ներկայումս հնարավոր չէ հաշվի չառնել ֆինանսատնտեսական պլանում մեծ արագությամբ զարգացող Չինաստանին, ինչպես եւ աշխարհաքաղաքական քարտեզի վրա նոր ձեւավորված Բրազիլիա-Ռուսաստան-Հնդկաստան-Չինաստան միությունը:

Քչերն են հասկանում, որ համաշխարհային ճգնաժամերը ոչ այնքան ֆինանսատնտեսական են, որքան համակարգային: Դա են ապացուցում հետեւյալ փաստերը: Ուորեն Բաֆեթը, Վլադիմիր Պուտինը եւ Բիլ Գեյթսը հանկարծ հայտարարում են, որ գումարների մեծ մասը տալիս են հասարակության կարիքների համար: Դժվար թե դա նրանց ինքնուրույն նախաձեռնությունը լիներ: Ավելի շուտ՝ դա աշխարհի «տերերի» հրամանն էր:

Ամենախոշոր ֆինանսական կլանները՝ Ռոքֆելլերները եւ Ռոտշիլդները, իրենց ակտիվները միավորում են: Այս միավորման վերաբերյալ մասնագետների կարծիքները տարբեր են: Մի մասը կարծում է, որ այս միությունը չի ազդի ընդհանուր ֆինանսական իրավիճակի վրա, եւ հետաքրքրություն է ներկայացնում միայն հզոր ազգանունների պատճառով: Մյուսները կարծում են, որ այս միությամբ նրանք ճգնաժամերից փրկում են իրենց ակտիվները: Սակայն հարցն այլ է. որքանո՞վ է այն արդյունավետ: Կասկած չկա, որ ճգնաժամին դեմառդեմ կանգնելուց հետո նրանց մրցակցությունը երկրորդ պլան է մղվել, իսկ առաջին պլանում է՝ ցանկացած տարբերակով պահպանել իրենց իշխանությունը մոլորակի վրա: Ասում են՝ հենց Ռոքֆելլերների եւ Ռոտշիլդների մրցակցության արդյունքում է ծնվել եվրոն:

Չինաստանն էլ իր հերթին է միջազգային հասարակությանը անակնկալներ մատուցում, այդ թվում՝ նաեւ տնտեսության լավայանման աճը: Ասում են, որ չինական հրաշքի հետեւում կանգնած են Ռոտշիլդները՝ նման ճանապարհով հարված հասցնելով Ռոքֆելլերների ամերիկյան աճին:

Համարվում է, որ Ռուսաստանը նույնպես կլանների մրցակցության բեմահարթակ է: Ռոքֆելլերը ցանկանում էր Խոդորկովսկու միջոցով ձեռքն առնել «Յուկոսը», բայց Ռոտշիլդները միջոցներ ձեռնարկեցին, եւ Խոդորկովսկին հայտնվեց բանտում: Եվ ոչ ոք չփորձեց կանգնել նախկին գործարարի կողքին:

Ռոքֆելլերներն ու Ռոտշիլդները հասկանում են, որ համաշխարհային ճգնաժամերը կարող են բերել տարածաշրջանային հակամարտությունների կամ համաշխարհային պատերազմի: Նման իրավիճակը պահանջում է ոչ միայն այս երկու հզոր ընտանիքների, այլեւ մնացած բոլորի ակտիվները միավորել: Ակտիվների միավորումը ազդանշան է բոլորի համար՝ միացեք մեր շարժմանը, ներդրեք ձեր գումարները եւ այդ ձեւով տվեք հավատարմության երդում:

Համաշխարհային փողերի միավորումը ձեւավորում է մի ուժ, որը կարելի է անվանել համաշխարհային պատմություն, այդ թվում՝ նաեւ ռուսականի մեջ ներխուժելու հարթ ճանապարհ: Ցանկացած հարաբերական անդորր համաշխարհային ֆինանսական շուկայում զգուշացնում է սպասվող փոթորիկի մասին...

Առռացված դեմքեր. Կոստանդին Համբարձումյան

Սկիզբը՝ նախորդ համարում

Կոստանդին Համբարձումյանը Վանում հիմնեց պահեստներ, ուր կենտրոնացրեց պարեն, հագուստ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու եւ այլն: Ժամանակակիցների վկայությամբ նա առատորեն բաժանում էր ստացված իրերը, շինանյութ էր տրամադրում տները վերականգնելու համար: Վանում նորոգում է մի քանի շինություն, որոնք տրամադրում է որբանոցի, հիվանդանոցի եւ արհեստանոցների կարիքների համար, իր օգնականների հետ արտեզյան ջրհորները ազատում էր թուրքերի ու քրդերի լցրած աղբից, մարդկային ու կենդանական մնացորդներից:

Մասնագիտությամբ գյուղատնտես Համբարձումյանը մի շարք ուսումնասիրություններ կատարելուց հետո կողմնորոշվեց, թե նահանգի որ գավառի որ հողատեսակն է պիտանի ցորենի այս կամ այն տեսակի համար եւ եզրակացրեց, որ մայիս ամսին տեղական ցորենը չի կարելի ցանել, ուստի Ղարադաղից բերեց արագ աճող գարնանացանի ցորեն: Նրա ամենատես աչքից չվրիպեց Վանի տառեխը: Տեղացիներից կազմավորեց հատուկ մարմին, որը պետք է որսար ձուկը, բաշխեր, իսկ մի մասը պահեստավորեր:

Համբարձումյանը ոչ միայն գյուղատնտես էր, այլեւ ռազմագետ: Վանի բնակչությանը քրդական հնարավոր հարձակումներից պաշտպանելու նպատակով հրամայեց առուները եւ ջրամբարները նախնական չափից ավելի լայնացնել՝ դարձնելով յուրահատուկ պաշտպանական կառույցներ:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Վանի օկրուգի կոմիսար նշանակվեց Համբարձումյանը:

Ժամանակավոր կառավարության ընդունած մի շարք «հեղափոխական» օրենքներն ավելի սրեցին իրադրությունը Ռուսաստանում: Համբարձումյանը միջոցներ ձեռնարկեց Վասպուրականի հայության պաշտպանության համար: 1917 թ. մայիսի 1-ին Վանում կազմակերպվեց միլիցիա՝ աշխարհազորային ստորաբաժանում, միաժամանակ հիմնվեց Վանի հայկական իշխանությունը՝ Համբարձումյանի նախագահությամբ, որտեղ ընդգրկված էին Սահմանադիր-ռամկավար եւ Դաշնակցություն կուսակցության անդամները. կազմավորվեց ազգային համաձայնության կառավարություն:

Հայ կամավորական հեծելավաշտը Վանում 1915 թ.

1917 թ. աշնանը իրավիճակը կտրուկ փոխվում է. ռուսական զորքը հեռանում է: Այդ ժամանակ Վանում էր գտնվում Հայկական 5-րդ հրաձգային գունդը, որի հրամանատարն էր գեներալ Մովսես Սիլիկյանը: Նա խորհուրդ է տալիս գնդի հիմքի վրա տեղացիներից կազմակերպել նոր ստորաբաժանումներ եւ սկսել զորահավաք:

1918 թ. փետրվարին Վանից սկսում են հեռանալ 5-րդ գնդի զինծառայողները: Նորակոչիկներին հրամանատարական կազմով ապահովելու համար կազմակերպվում են ենթասպաների չորսամսյա դասընթացներ: Վանի հայկական զինուժն ուներ նաեւ թնդանոթներով ու գնդացիրներով զինված մի քանի մոտորանավակ:

Դրամի բացակայությունը իշխանություններին ստիպում է շրջանառության մեջ դնել սեփական դրամանիշը՝ 5, 10, 25, 50 եւ 100 ռուբլի արժողությամբ, որոնք կոչվում էին փոխգիրներ: Ընդհանուր առմամբ, պատրաստվեց 164 հազար ռուբլի: Դրամը շրջանառության մեջ եղել է ընդամենը 22 օր՝ 1918 թ. փետրվարի 27-ից մինչեւ մարտի 21-ը, երբ թուրքական հարձակումը հարկադրում է Վասպուրականի հայությանը գաղթել Պարսկաստան:

Փոխգիրները հանդիսանալով վճարման միջոց՝ թղթադրամների այն շարքին չէին պատկանում, որոնք իրենց արժեքով հավասարվում էին մետաղյա դրամներին: «Փոխգիր» նշանակում է փոխանակագիր, այսինքն՝ որոշակի փաստաթուղթ, որով նահանգի կոմիսարիատը պարտավորվում էր հետագայում վճարել նրանց արժեքը:

1918 թ. փետրվարին օսմանյան զորքերն անցնում են լայնածավալ հարձակման, գրավում են Էրզրումը, Սարիղամիշը եւ մոտենում Կարսին: Նման պայմաններում ճիշտ կլիներ Վասպուրականի բնակչության տարհանումը Արեւելյան Հայաստան, որի կողմնակիցն էր Համբարձումյանը, սակայն Թիֆլիսից ստացվող հուսադրական խոստումները հնարավորություն չէին տալիս հանգելու վերջնական կարծիքի: Համանման խոստումներ էր տալիս բրիտանական հրամանատարությունը՝ խոստանալով մեծ քանակությամբ զենք, զինամթերք, դրամ, որոնք մնացին լոկ խոստումներ:

Վանի հայկական իշխանությունը որոշեց նախահարձակ գործողություններ կատարել թուրք-քրդական ուժերի դեմ: 1918 թ. փետրվարի 13-ին, Համբարձումյանի գլխավորությամբ, լճային եւ ցամաքային հարձակում կատարվեց Ալջավազում (Արծկե) ամրացած թուրքական ստորաբաժանման դեմ, որն ավարտվեց հաջողությամբ: Թշնամին լքեց բնակավայրը եւ փախուստի դիմեց: Փետրվարի 14-ին համանման գործողություն կատարվեց Ախլաթը ազատագրելու համար, ինչը, սակայն, չհաջողվեց:

Շարունակելի

Պատրաստեց **Ռուբեն ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Կրակոցներ անասնաֆերմայում

47-ամյա Արա Մովսիսյանը 2016 թ. մայիսի 14-ին Գյումրի քաղաքի Ղարսի խճուղում գտնվող իր անասնագոմում մի խումբ ծանոթների հետ հաց էր կերել, խմիչք օգտագործել: Քիչ անց այնտեղ էր գնացել նրա ծանոթ Արմեն Փ.-ն, ումից տեղեկացել էր, որ գերեզմանատանը մահարձան պատրաստող վարպետների հարցով Արմենը վիճել է Արթուրի ու Համլետի հետ: Արա Մովսիսյանը, ըստ մեղադրանքի՝ Արա Մովսիսյանը իր մոտ եղած ատրճանակից երկու կրակոց է արձակել Գուրգենի Ա.-ի ուղությամբ եւ սպանել նրան:

Արա Մովսիսյանին նախաքննական մարմինը մեղադրանք էր առաջադրել դիտավորյալ սպանության, ապօրինի հրազեն եւ ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու համար:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում Արա Մովսիսյանը իրեն մեղավոր է ճանաչել ապօրինի հրազեն ձեռք բերելու, պահելու մեղադրանքում միայն: Նա ընդունել է, որ Գուրգենը մահացել է իր գործողությունների հետեւանքով, սակայն պնդել է, թե ինքը գործել է ինքնապաշտպանության նպատակով: Ըստ Արա Մովսիսյանի՝ Արմեն Փ.-ն խմած էր, ինչ-որ բան էր պատմում ներկաներին, բայց ինքը նրա ասածին ուշադրություն չէր դարձնում, զբաղված էր նարդի խաղալով: Զանգել ու կանչել են նաեւ Համլետին՝ որպես ընկերոջ: Քիչ անց զանգել է Համլետի եղբայր Գուրգենն ու իրեն հարցրել է՝ Արմեն Փ.-ն իր հե՞տ է: Լսելով իր դրական պատասխանը՝ նա հայհոյել է Արմենին: Ինքը նախատել է նրան: Որոշ ժամանակ անց Համլետն ու Գուրգենը եկել են իր մոտ: Գուրգենը խմած էր. նա սկսել է ձեռքերով ու ոտքերով հարվածել Արմենին: Ինքը նկատել է, որ Գուրգենի գոտկատեղում դանակ կա: Դրանից հետո Գուրգենին դուրս են հանել, մյուս տղաներն էլ են դուրս եկել: Ինքը դուրս գալուց առաջ «ապահովության համար» վերցրել է ատրճանակը:

Բակում Գուրգենը հայհոյել է, ինքը դիտողություն է արել: Ինքը մոտեցել է բակի ծորակին, որ ձեռքերը լվանա, երբ լսել է տղաներից մեկի ձայնը. «Վախ, Արա՛, փախի»: Տեսել է, որ Գուրգենը վազելով գալիս է իր կողմը, իսկ ձեռքին արյունոտ շեղբով դանակ կար. նա դանակով հարվածել էր տղաներից Վարդանին: Գուրգենի ձեռքին արյունոտ դանակ տեսնելով՝ ինքը նախազգուշական կրակել է գետնին: Գուրգենը շարունակել է իր վրա գալ, ինքը երկրորդ անգամ է կրակել: Գնդակը դիպել է Գուրգենի ոտքին: Երբ Գուրգենն իրենից 2-3 մետրի վրա էր, չի հասկացել՝ ինչպես է մեկ անգամ էլ կրակել, այս անգամ՝ նրա կրծքավանդակին: Ինքը չի ցանկացել սպանել Գուրգենին, ուղղակի ցանկացել է կանխել նրա մոտենալը...

Ընդհանուր իրավասության դատարանը Արա Մովսիսյանին մեղավոր է ճանաչել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցումով կատարված սպանության համար եւ դատապարտել 4 տարի 3 ամիս ազատազրկման:

Գոհար ՔԱԼԱԾՅԱՆ

Ընդդեմ հասարակական կարգի

Շատ դեպքերում խուլիգանական գործողությունները նման են այլ հանցագործությունների ընթացքում կատարվող այնպիսի գործողությունների, ինչպիսիք են, օրինակ, գույքի վնասումը, սպառնալիքը: Բայց խուլիգանության դեպքում ամենաէական գործոնը, որը նաեւ հանցակազմի առկայության կարեւոր նախապայմանն է, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքն է:

Դենց այդպիսի վերաբերմունք դրսեւորեցին Տավուշի մարզի գյուղերից մեկի մի խումբ բնակիչներ:

Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնում էր, որ համագյուղացիներից մեկը որդիների ու թոռների հետ դպրոցում կռիվ է սարքել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվեց, որ մի խումբ անչափահաս տղաներ վիճաբանել են մեկ այլ խումբ հասակակիցների հետ, ծեծել են իրար, իսկ հետո իր «զորքով» դեպքի վայրում հայտնվել է գյուղապետը՝ ի պաշտպանություն խմբերից մեկում «մարտնչող» թոռան: Հետեւանքը եղել է այն, որ մասնակիցներից մեկը դանակով վնասել է մյուսի ձեռքը:

Պարեկապահակետային ծառայության ոստիկանները Չարենցի փողոցից, խուլիգանության կասկածանքով, ոստիկանության Մարաշի բաժանմունք բերման ենթարկեցին չորս երիտասարդների եւ ներկայացրին երեք աղջիկների:

Պարզվեց, որ գիշերային ակումբներից մեկի մոտ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող երիտասարդները, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, դրսեւորել էին ագրեսիվ վարքագիծ, հայհոյել ու ծեծել էին աղջիկներին:

Խուլիգանությամբ ինքնահաստատվող քառյակի գործով ոստիկանության Կենտրոնական բաժնում նյութեր են նախապատրաստվում:

Ըստ ոստիկանության օպերատիվ ամփոփագրերի՝ 2018 թվականի ինը ամիսներին խուլիգանության 274 դեպք է գրանցվել: Այսինքն, այդքան անգամ հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործություն է կատարվել: Քրեական օրենսգրքի 258 հոդվածը երեւույթը հենց այդպես էլ բնորոշում է՝ հասարակական կարգի եւ բարոյականության դեմ ուղղված հանցագործություն: Ըստ այդմ՝ խուլիգանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով: Կատարման եղանակով պայմանավորված՝ օրենքը նախատեսում է պատիժ՝ տուգանքից մինչեւ չորսից ութ տարի ժամկետով ազատազրկում:

Մեկ այլ երիտասարդ էլ փորձեց ինքնահաստատվել Թումանյան փողոցում: Գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ՝ 21-ամյա Արմեն Գասպարյանը, գիշերվա ժամը 24-ի սահմաններում, գոռգոռացել, հայհոյել, սպառնալիքներ էր հնչեցրել՝ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը: «Ներկայացումը» դադարել էր, երբ հայտնվել էին ՊՊՄ ոստիկաններն ու նրան բերման ենթարկել ոստիկանության Կենտրոնական բաժին:

Խուլիգանության փաստով նյութեր են նախապատրաստվում:

Պարեկապահակետային ծառայության գնդի ոստիկանների միջամտությամբ հոկտեմբերի 24-ի գիշերը «ընդհատվեց» նաեւ 40-ամյա Դարություն Ջենֆիլյանի եւ 30-ամյա Դայկանուշ Դակոբյանի «բեմադրությունը»: Ջույգը ուշ երեկոյան ինքնադրսեւորվում էր Սասունցի Դավթի կայարանամերձ հրապարակում:

Ոստիկանության Էրեբունու բաժնում փաստով նյութեր են նախապատրաստվում:

Թեեւ խուլիգանության դեպքերը մեծամասամբ կատարվում են հասարակական վայրերում, չի բացառվում, որ դրանք կատարվեն նաեւ հասարակական նշանակություն չունեցող վայրերում: Այդ դեպքում արարքի հասարակական լինելը որոշվում է դեպքի վայրում գտնվող մարդկանց ներկայությամբ:

Մեկ դիտարկում եւս. շատերը խուլիգանությունը որպես հանցագործություն չեն դիտում, օրենքի սահմանած պատիժն էլ ծանր են համարում: Մինչդեռ խուլիգանությունից մինչեւ ծանր հանցագործություն ընդամենը մեկ քայլ է...

Դասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ավազակությունը ձախողվեց

Նոյեմբերի 29-ի գիշերը Արմավիրի մարզի Զարթոնք գյուղում ավազակային հարձակում էր կատարվել: Երկու դիմակավոր, ինքնաձիգով զինված, մտել էին տուն, բայց գործն, ըստ ծրագրածի, հաջողել չէին կարողացել: Հարձակումը ձախողվել էր...

Կատարվածի մասին ոստիկանության Մեծամորի բաժնում տեղեկացան օպերատիվ կառավարման կենտրոնից: Տանտերերը դիմադրել էին, բռնել հարձակվողներից մեկին, մյուսին հաջողվել էր փախչել:

Փախուստի դիմած կասկածյալի մոտ ինքնաձիգ կար, չէր բացառվում, որ ընկերոջն ազատելու նպատակով հետ գար: Հարկավոր էր րոպե առաջ դեպքի վայր հասնել. զարգացումներն անկախատեսելի էին, ամեն վայրկյանը կարող էր ճակատագրական լինել:

Քրեական հետախույզներն անհապաղ Զարթոնք մեկնեցին: Պարզվեց՝ ավազակային հարձակում կատարած անձանցից մեկը, որ բռնվել էր, Արմավիրի բնակիչ Կարեն Այվազյանն էր: Նա բերման ենթարկվեց ոստիկանության Մեծամորի բաժին:

Ըստ նախնական տվյալների՝ դիմակավորները ցանկապատով էին մտել բակ՝ օգտվելով նրանից, որ այդ պահին տանտիրոջ աղջիկը փորձում էր տնից դուրս գալ: Նրան հրել էին, ներխուժել տուն, բայց սկզբում աղջկա ծնողները, իսկ ավելի ուշ արդեն հարեւաններն օգնության էին հասել, բռնել նրանցից մեկին, մյուսը, ինքնաձիգը ձեռքին, փախել էր:

Ընտանիքի անդամները հրաշքով չէին վնասվել: Տնից որեւէ բան հափշտակել չէր հաջողվել: «Բայց դժվար էր ասել, թե իրադարձությունն ինչ ընթացք կստանային,- ասում էին տանտերերը,- եթե իրավապահները մի փոքր ուշանային»:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է «ԱԿՍ» ինքնաձիգի մեկ փամփշտատուփ՝ 5,45 մմ տրամաչափի 18 փամփուշտով, երկու դիմակ, գլխարկ, մեկ զույգ ձեռնոց, էլեկտրաշոկի մահակ, տոպրակ, որի մեջ կպչուն ժապավեն, պոլիմերային կապիչներ էին:

Հարուցվել է քրեական գործ:

Ձեռնարկվում են միջոցառումներ փախուստի դիմած անձի ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ:

Գոռ ՎԱՆՅԱՆ

Գապաբալոններ էր գողանում

Հոկտեմբերի 3-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին մեքենայի գազաբալոնի գողության վերաբերյալ ահազանգ ստացվեց: Մեքենայատերը վաղ առավոտյան էր նկատել, որ «Օպել»-ի ապակին կոտրված է, գազաբալոնն էլ՝ հափշտակված:

Հոկտեմբերի 17-ին նման իրավիճակի բախվեցին Նոր Նորքի եւս երկու բնակիչ. նրանց մեքենաների գազաբալոններն էլ էին գիշերը հափշտակել: Այս ահազանգերին հաջորդեցին եւս երեքը. վերջինը հնչեց հոկտեմբերի 31-ին:

Նոր Նորքի ոստիկանները սկսեցին հետախուզական միջոցառումներ, այդ թվում՝ բակերում դարանակալումներ:

Բոլոր դեպքերը կատարվել էին գիշերը: Ականատեսներ չկային: Չկար նաեւ գողություններից թեկուզ մեկը ֆիքսած տեսագրություն: Հանգամանքներ, որոնք չխանգարեցին հանցագործությունները բացահայտելուն:

Ոստիկանների տեսադաշտում հայտնվեց Նոր Նորքի 2-րդ զանգվածում ապրող Կարեն Մելքոնյանը: Նրա նկատմամբ կասկածները շուտով հիմնավորվեցին:

Նոյեմբերի 23-ին քրեական հետախույզները ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկեցին 45-ամյա Կարեն Մելքոնյանին: Նա ներկայացվեց Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին: Խոստովանեց, որ գազաբալոններն ինքն է գողացել ու վաճառել:

Հետագա միջոցառումներով Նոր Նորքի ոստիկանները ավտոպահեստամասերի վաճառքի կետերից մեկում հայտնաբերեցին երկու գազաբալոն, որոնք, նրանց տեղեկություններով, գողացված էին:

Շարունակվում են միջոցառումները գողոնի մյուս մասը հայտնաբերելու եւ դեպքերի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախաքննությունը շարունակվում է:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Աղետից երեսուն տարի անց

1988 թվականի դեկտեմբերի 7-ն էր:

Հայաստանի ՆԳՆ պետավտոտեսչության վարչության պետը շտապ խորհրդատվություն է հրավիրում եւ տեղեկացնում, որ երկրաշարժի հետեւանքով ավերվել են Սպիտակ քաղաքը եւ շրջանի գյուղերը, զգալի վնաս է հասցվել Կիրովական քաղաքին, վնասներ կան նաեւ Լենինականում, սակայն կապի բացակայության պատճառով այնտեղից մանրամասներ չկան:

ՆԳՆ ղեկավարության կարգադրությամբ՝ պետավտոտեսչության անձնակազմը մոբիլիզացվում եւ մեկնում է Լենինական, Սպիտակ ու Կիրովական. վարչությունում մնում է միայն օպերատիվ խումբը:

Ճանապարհապարեկային ծառայության գումարտակի հրամանատարի տեղակալ Է. Մանուչարյանին հանձնարարվում է երկու կարգախմբով մեկնել Լենինական, պարզել իրողությունը եւ կատարել անհրաժեշտ աշխատանքներ՝ օգնություն ցույց տալու համար: Է. Մանուչարյանը կարգադրությունն ստանալուց հետո անմիջապես մեկնում է Լենինական: Արդեն Աշտարակի մատույցներում հանդիպակաց ընթացող «շտապօգնության» եւ այլ մեքենաների հոսքից զգացվում էր, որ Լենինականում վիճակն օրհասական է: Երեւան-Աշտարակ-Լենինական ճանապարհը սպասարկող ՊԱՏ երկրորդ եւ չորրորդ դասակների կարգախմբերի հանդիպելիս նա ռադիոկապով կարգադրում է միանալ իր գլխավորած կարգախմբերին:

Ճանապարհներն ինչպես խցանումների, այնպես էլ մարդկանց խուճապի պատճառով անանցանելի էին, ուստի կարգախմբերին հրամայվում է անմիջապես անցնել ծառայողական պարտականություններին՝ կարգավորել երթեւեկությունը, բացել խցանումները, քաղաք մտնող մեքենաների մի մասն ուղղորդել շրջանցիկ ճանապարհներ՝դեպի Մայիսյան եւ Ղարիբջանյան գյուղեր:

Պետավտոտեսչության աշխատակիցները այդ օրերին հերոսական աշխատանք իրականացրին ճանապարհներին առաջացած խցանումները վերացնելու համար. աշխատում էին օր ու գիշեր, ցեխի ու փոշու մեջ կորած, անքուն գիշերներով: ԽՍՀՄ օպերատիվ խմբի տեղեկանքում արձանագրվել է, որ Կիրովականի պետավտոտեսչության պետ Կորյուն Մարգարյանը, չնայած Սպիտակում հարազատներ էր կորցրել, օր ու գիշեր աշխատել է ճանապարհները խցանումներից ազատելու համար, իսկ տեսուչ Մ. Մարությանը միլիցիայի մեկ այլ աշխատակցի հետ փլատակներից 14 մարդ է փրկել:

Հաշվի առնելով, որ աղետի գոտում միլիցիայի աշխատանքը կազմալուծված էր՝ ոմանք զոհվել էին, ոմանք հարազատներ կորցրել եւ հոգեբանորեն ի վիճակի չէին ծառայելու, պետավտոտեսչության վարչության աշխատակիցները ողջ կազմակերպչական աշխատանքը վերցրել էին իրենց վրա:

Տեսնելով Լենինականում արհավիրքի մասշտաբները՝ պետավտոտեսչության վարչությունը լրացուցիչ ուժեր է ուղարկում, որոնցից կազմվում է համահավաք գումարտակ՝ ԽՍՀՄ-ից գործուղված անձնակազմի հետ միասին: Գումարտակի հրամանատար է նշանակվում Է. Մանուչարյանը: Հետագայում գումարտակը համալրվեց ԽՍՀՄ այլ հանրապետություններից օգնության եկած պետավտոտեսչության աշխատակիցներով:

Կարճ ժամանակում հնարավոր եղավ վերականգնել երթեւեկության կարգավորման տեխնիկական միջոցները եւ ապահովել բեռների ու փրկարարական մեխանիզմների անարգել մուտքը աղետի գոտի: Փողոցներից մաքրվեցին խոչընդոտները, կազմակերպվեց շինարարական աղբի տեղափոխման համար տրանսպորտի երթեւեկության սխեման:

Թվում է՝ սովորական աշխատանք էր, բայց պետավտոտեսչության ծառայողները աշխատել են օր ու գիշեր, շատ ժամանակ ոտքով են հասել անհրաժեշտ վայրը եւ կատարել երթեւեկության կազմակերպման փոփոխությունները, որովհետեւ ամեն տեղ չէ, որ կարող էին մեքենայով գնալ: Շատերի համազգեստը ցեխի մեջ կորած էր, թերսնված ու ծարավ (տեղի ջուրը խմելն արգելված էր) էին, մրսած ու գերհոգնած: Նրանց նաեւ քարոզչական հատուկ մեքենա էր հատկացվել. բարձրախոսի միջոցով կոչ էր արվում տրանսպորտը փողոցներից հանել, որպեսզի փրկարար մեխանիզմները հնարավորություն ունենային աշխատել: Երկրաշարժի երրորդ օրից արդեն խցանումները լիկվիդացվեցին եւ վերականգնողական մեխանիզմների մուտքը դարձավ իրողություն: Կարճ ժամանակում մշակվեցին եւ ներդրվեցին աղետյալ քաղաքների ճանապարհային երթեւեկության օպերատիվ սխեմաներ: ԽՍՀՄ տարբեր հանրապետություններից օգնության էին բերվել մեծաքանակ տրանսպորտային միջոցներ, ինչը նաեւ բարդացնում էր երթեւեկությունը:

Պետավտոտեսչությանն էր հանձնարարված օգնությունը՝ սնունդը, ՆԳ աշխատակիցներին, «շտապօգնության» եւ շինարարական մեքենաներն ու տեխնիկան տեղաբաշխել աղետի գոտում ըստ պահանջարկի, օրվա ցանկացած ժամին ապահովել տարբեր հանրապետություններից եկած օգնությունը աղետի գոտի հասցնելը:

Պետավտոտեսչության աշխատակիցները զբաղվում էին նաեւ փլատակներից հանված դիակների տեղափոխման, ճանաչման աշխատանքով, դիակապտության դեմ պայքարով: Մարդիկ միլիցիայի համազգեստով մարդուց էին օգնություն խնդրում:

Այդ դաժան օրերին պետավտոտեսուչներն ինչ ասես չեն տեսել՝ փլված տներ, հրապարակներում շարված դիակներ, վշտից սառած դեմքերով մարդիկ... Սոսկալի էր դպրոցների փլատակների տակ մնացած աշակերտների տեսարանը, ցրիվ եկած գրքերն ու տետրերը, նաեւ վարորդական քննություն ընդունող զոհված պետավտոտեսուչ Վալերի Խառատյանին եւ վիրավոր ու զոհված սաներին փլատակից հանելու տեսարանը...

Երեսուն տարի անց այդ ծանր հիշողությունները շարունակում են ուղեկցել աղետի գոտում ծառայություն կատարած պետավտոտեսուչներին:

Ժորա ԲԱՐՍԱՄՅԱՆ

Ոստիկանության պաշտոնաթող գնդապետ

«Աշխատանքի» փնտրտուք

Տավուշի մարզի բնակիչ Սամսոն Մկրտչյանը մայրաքաղաք աշխատանք գտնելու համար չէր հասել, այլապես գոնե մեկ-երկու տեղ կդիմեր: Աշխատել չէր սիրում ու չաշխատելու պատճառ էր փնտրում, օրինակ՝ իբր աշխատանք չկա, ինքն էլ լինելով նյութապես վատ վիճակում՝ չգիտի՝ «որ քարը տա գլխին»...

Քառասուներկու տարեկան է Սամսոն Մկրտչյանը, եւ ապրած կյանքի չնչին ձեռքբերումներից հիմնականները սրանք են՝ դատվածություններ, մականուն, գողանալու սովորություն:

Ինչեւէ: Սամսոն Մկրտչյանը մի օր ճամփա ընկավ Երեւան, եւ «ֆինանսական վիճակը» բարելավելու փնտրտուքը նրան հասցրեց Բագրատունյաց փողոց: Հարմար թիրախը դեղատունն էր: Ներսուդուրսը զննեց. մարդ չկար՝ ինքն ու դեղատան աշխատողն էին: Մտքին առաջին եկածը տակդիրն էր. իբր տակդիր գնելու համար էր մտել դեղատուն: Ու մինչ աշխատողը, անտեղյակ «հաճախորդի» բուն նպատակին, կգնար պահեստից բերելու նրա պահանջածը, Սամսոնը դրամարկղից հափշտակեց փողն ու փախավ...

Վաթսունմեկ հազար դրամ էր. երկու-երեք օրում ծախսեց ու մտածեց նոր «գործերի» մասին:

Դեղատան տարածքը ծանո՞թ վայր էր, թե՞ ինքն էր սնոտիապաշտ՝ իբր հաջողակ տարածք է, որ հեռու չգնաց: Գիշերվա ժամը 1-ի կողմերն էր: «Հետախուզում էր» շուրջբոլորը՝ տեսադաշտում պահելով հատուկենտ անցուդարձողներին, երբ ինքը հայտնվեց տեսադաշտում: Տարածքում գիշերային ծառայություն կատարող ոստիկանների՞ տեսադաշտում:

Դեղատան հարեւանությամբ գտնվող մթերային խանութից գողություն կատարելու փորձը փորձանք դարձավ: Իսկ հետո, երբ պարեկող ոստիկանների ուղեկցությամբ հայտնվեց ոստիկանությունում, խոստովանեց նաեւ օրեր առաջ դեղատնից կատարած գողությունը:

Գողության փաստով հարուցված քրեական գործի քննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Բազումի բաժնի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 30-ին Վանաձորի Աբեղյան փողոցից բերման է ենթարկվել 51-ամյա Գառնիկ Հ.-ն, որը ոստիկանության Ստեփանավանի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախություն) մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 30-ին ոստիկանության ՔՀԳՎ եւ Նաիրիի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ Մոսկվայում հայտնաբերվել եւ Հայաստան է տեղափոխվել 38-ամյա Կարեն Զ.-ն, որը 2016 թ. նոյեմբերից ոստիկանության Նաիրիի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 242 եւ 244 հոդվածների մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 30-ին ոստիկանության ՔՀԳՎ եւ Նաիրիի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ Մոսկվայում հայտնաբերվել եւ Հայաստան է տեղափոխվել 21-ամյա Մարիամ Ն.-ն, որը 2012 թ. հունիսից ոստիկանության Կենտրոնական բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 179 հոդվածի՝ առանձնապես խոշոր չափերի յուրացման կամ վատնման մեղադրանքով:

◆

Նոյեմբերի 30-ին ոստիկանության ՔՀԳՎ եւ Նաիրիի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ Մոսկվայում հայտնաբերվել եւ Հայաստան է տեղափոխվել 36-ամյա Աշոտ Հ.-ն, որը 2006 թ. մարտից ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողություն) մեղադրանքով:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ձեռնարկված միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 29-ին կամավոր ոստիկանության Տարոնի բաժին է ներկայացել ՌԴ Ինտերպոլի ԱԿԲ կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի (խարդախություն) մեղադրանքով միջազգային հետախուզման մեջ գտնվող 1971 թ. ծնված Վահե Ս.-ն:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Շենգավիթի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ նոյեմբերի 29-ին Գարեգին Նժդեհի փողոցից բերման է ենթարկվել 1991 թ. ծնված Վահան Ն.-ն, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ նոյեմբերի 29-ին Բեռլին-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո «Զվարթնոց» օդանավակայանից կամավոր բաժին է ներկայացել 1985 թ. ծնված Աշոտ Հ.-ն, որը 2014 թ. հոկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 179 հոդվածի (յուրացնելը կամ վատնելը) մեղադրանքով:

◆

«Հետախուզում-2018» օպերատիվ-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Կոտայքի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 3-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո կամավոր բաժին է ներկայացել 1971 թ. ծնված Արշալույս Ս.-ն, որը 2015 թ. հուլիսից ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից հետախուզվում էր կաշառք տալուն հանցակցելու մեղադրանքով:

Ապուխտ
Հաշեկի վեպի հերոսը
Գյուղ, Կոտայքի մարզ
Հեղուկ / ... Լոնդոն / Քաղաք, Ֆրանսիա
Աշխարհագրական ...
Տրանսպորտի աշխ. / Թանձր ճաշ
Հնոց
Շնազգի կաթնասուն / Համաստեղություն
Նահանգ, ԱՄՆ
Գավառ, Մեծ Հայք / Բախտ
Անգլ. երկարութ. միավոր
Վերջին ցարը / 4047 քմ
... Լորկա, Մարկես
Սկյութական թուր
ՀԱՀ / Լեհ, ռուս
Թռչուն / Հոների արքան
Լիուլի / Փլատակ
Դինամիտ
Շումերական աստվ. / Վիա ...
... Ալիխանյան (թատ.)
Գետ, Անդրբայկալ / Կարծր բնափայտով ծառ
Հեռուստաալիք / Կովկաս. հին ժողովուրդ
Հարկավոր է օրգանիզմին
Դրամ, Ալբանիա / Զինվոր. կոչում
Բուսական հանածո խեժ
Տաղանդ / Քեն / Քիմ. տարր
Վենետիկյան դրամ / Ծաղիկ
Կղզի, Ճապոնիա
Հակ / Շերեփ
Քարատեսակ
Եկեղեցի, Աշտարակ
Գերմ. բանաստեղծ եւ փիլ.
Փոքր, ռեստորան, զվարճանքի վայր
Օգիրիսի եւ Իզիդայի որդին
... Ռենո
Ռիշելիե, Մազարինի / Մետաղաթել
Քերծե
«Իմ սիրտը լեռնեռում է» / Արվեստ
Հնդկ. հնագույն տեքստեր
Պա դե ... / Ոդիսեւս
Պեչորայի վտակ
Ժիլբեր ...
Երաժշտ. պիես
... Ալամոս / Ճապ. բանաստ. ժանր
«Յոթ սամուրայ», ռեժիսոր
Խանձարուր / Ժառանգակիր
«Սպարտակ», «Ժիզել»
Հ / Զարդաքար
Տեղի, ժամանակի ... / 28 մայիսի
Տիեզերագնաց, ԱՄՆ
Բոլերո
Երկիր, Կենտր. Ամեր. / Պոնտոսի թագավոր
Մարզիկի, դերասանի առաջին ելույթը
Հանքանյութ
Հռոմ. բանաստեղծ
Գերման. բժիշկ եւ ֆիզ. / Վանկի տեւողութ. չափ
Մեռյալներին տեղափոխող (հուն. դից.)
«Աննա ...» / Ռոքուել ...
«Հանքաբանութ. հայրը»
Հագուստի տարր
Սունդուկյան
Իտալ. դաշնակահար, երգահան
Մարմնի մաս / Ուլան ...
Եկեղեցի, գավիթ
Ցուլի նախնի / Ջրալի կերակուր
... Ռուսոս / Նոտա / Մոգամբիկ
Անուշեղեն՝ պտուղներից / Առու
«Մարատի մահը» (նկար)
Իտալացի ֆուտբոլիստ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Աստղագուշակ

07.12 - 13.12

Խոյ - Հանդիպումներին պատրաստվեք ամենայն լրջությամբ՝ նաեւ մեծ տեղ տալով արտաքինին: Աշխատեք քիչ նախաձեռնություն ցուցաբերել:

Ցուլ - Խուսափեք ավելորդ ծախսերից: Ցանկալի չէ ուղեւորությունների մեկնել, եթե դրանք նախապես պլանավորված չեն:

Երկվորյակ - Աշխատատար գործերը կշեղեն տհաճ մտքերից, կօգնեն կենտրոնանալ եւ կոնստրուկտիվ տրամադրվել:

Խեցգետին - Կհաջողվի շրջապատին համոզել ձեր ճշմարտացիությունը, սակայն շուտով ինքներդ կսկսեք դրանում կասկածել:

Առյուծ - Կհաջողվի լուծել մի շարք խնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտներ էին ձեր կարիերայի ճանապարհին:

Կույս - Բարդ են գործընկերների հետ հարաբերությունները: Նշանի որոշ ներկայացուցիչներ կդառնան խարդավանքի զոհ:

Կշեռք - Չի բացառվում, որ ստիպված լինեք փոխել ձեր կյանքը: Նոր հնարավորություններ, որոնցից կարելի է օգտվել:

Կարիճ - Մինչ օդային դղյակներ կառուցելը, մտածեք, թե հնարավորություն չունե՞ք ավելի հուսալի եւ օգտակար բան կառուցել: Անձնական բնույթի խնդիրները համեմատաբար հեշտ կհարթեք:

Աղեղնավոր - Կարեւոր է զգուշությունը: Շարժե քննարկել այնպիսի հարցեր, որոնք կապված են ներդրումների, ձեր նախագծերի ֆինանսավորման հետ:

Այծեղջյուր - Դուք չեք հետեւում խորհուրդներին, նախընտրում եք ձեր գլխին նոր փորձություններ բերել: Չի բացառվում, որ ֆինանսական նոր աղբյուրը գտնեք:

Ջրհոս - Հեշտությամբ կլուծեք բարդ խնդիրները: Չնախատեսված գնումներ անհաջող կլինեն:

Ձուկ - Ֆինանսական վիճակը կայուն է. կարելի է երկարաժամկետ ներդրումների մասին մտածել:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. f2-g3 e5:g3 2.h4:d8 x

Խնդիր N2 1. a7-b8 d8:d4 2.d6-e7 f8:d6 3. b8:a1 x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու
Հայաստանի չեմպիոն,
IDF վարպետ,
սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 06.12.2018 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 7170:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: